

Շողովուրդ

34
(2884)

13 մարտի չորեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

✉ ք. Երևան, Արվյան 22ա/3 (0010)

☎ + 374 10 546423

@ info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ «ԽՈՍՏՈՎԱՆՈՒՄ Է» ԻՐ ՄԽԱԼՆԵՐԸ



Նիկոլ Փաշինյանը եւ նախարարները հաջորդ շաբաթ կգնան խորհրդարան: Մարտի 19-ին մեկնարկելիք ԱԺ Նիստերի օրակարգում, ի թիվս այլ հարցերի, լինելու է նաեւ 33 կառավարության ծրագրի 2023 թվականի կատարման ընթացքի եւ արդյունքների մասին զեկույցը:

Նախագիծն անձամբ զեկույցելու է Նիկոլ Փաշինյանը:

Կառավարության զեկույցը բաղկացած է լինելու մի քանի բաժիններից՝ Անվտանգություն, ԼՂ-ի բռնի տեղահանվածներին աջակցության վերաբերյալ, Արտաքին քաղաքականություն՝ ներառյալ Հայաստան- Ադրբեջան, Հայաստան-Թուրքիա, Հայաստան-ՌԴ, Հայաստան-ԱՄՆ, Հայաստան-Իրան, Հայաստան-ԵՄ եւ այլ երկրների հետ հարաբերությունների մասին զեկույց, Սփյուռքի հետ կապեր, Պաշտպանություն, Կոռուպցիայի դեմ պայքար եւ այլն:

Կառավարության ծրագրի կատարման ընթացքի եւ արդյունքների մասին զեկույցը, ըստ էության, իրենից ներկայացնում է անցնող 2023թ.-ին տարբեր ոլորտներում արված աշխատանքի, ինչպես նաեւ տարբեր բարձրաստիճան պաշտոնյաների հետ հանդիպումների արդյունքների ամփոփում:

Ինչպես զեկույցի մակագրությունից երեւում է, այն կազմել է վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը:

Ուսումնասիրելով զեկույցը՝ «Ժողովուրդ» օրաթերթը մի քանի դրվագներ է առանձնացրել:

Օրինակ՝ Արայիկ Հարությունյանի կազմած զեկույցից տպավորություն է, որ Արցախի հայաթափման մեջ մեղավոր են բացառապես ՌԴ-ն եւ ՀԱՊԿ-ը, իսկ Հայաստանը՝ որպես ԼՂ անվտանգային երաշխավոր, որեւէ պարտավորություն չունի, ագրեսոր Ադրբեջանը՝ որեւէ մեղավորություն չունի ԼՂ հայաթափման մեջ:

«2020, 2021, 2022 թթ. պատերազմական իրադարձություններից հետո, երբ ՀԱՊԿ-ն անարդյունավետ գտնվեց, Լեռնային Ղարաբաղում (այսուհետ՝ ԼՂ) տեղակայված Ռուսաստանի Ռաշնության (այսուհետ՝ ՌԴ) խաղաղապահ զորախումբն ի վիճակի չէր կարողանալու Լաչինի միջանցքի՝ 2022 թվականի դեկտեմբերի 12-ից մեկնարկած ապօրինի շրջափակումը, ապա եւ 2023 թվականի սեպտեմբերին՝ հայերի բռնի տեղահանումը ԼՂ-ից, Կառավարությունն անվտանգային հարաբերությունները դիվերսիֆիկացնելու որոշում է կայացրել», - նշված է կառավարության զեկույցում:

Կառավարությունն այս զեկույցում նաեւ «խոստովանել է», որ նախորդ տարի Ադրբեջանի եւ Թուրքիայի ներկայացուցիչների հետ ունեցած հանդիպումներն անարդյունավետ են եղել, կամ, իրենց ձեռնկերպամբ, «հարաբերություններում էական առաջընթաց ապահովել չի հաջողվել»:

Կառավարության տվյալներով՝ 2023 թվականի սեպտեմբերի 19-ին Ադրբեջանի կողմից սանձազերծված ռազմական գործողությունների հետեւանքով մեկ շաբաթում բռնի տեղահանվել է ԼՂ-ում բնակվող ավելի քան 100 հազար հայ:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Արցախի պատգամավորներին թույլ չեն տալիս հատել 33 սահմանը: Մասնավորապես, նման վիճակում է հայտնվել Արցախի պատգամավոր Գեղամ Ստեփանյանը, ու նրան «Զվարթնոց» օդանավակայանից հետ եւ ուղարկել եւ արգելել են հատել 33 սահմանը: Մեզ հասած լուրերի համաձայն՝ պատճառը կապված է կոնկրետ քրեական գործի հետ: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Արցախի ԱԺ պատգամավորները հերթով հրավիրվում են Քննչական կոմիտե՝ հարցաքննության: Մեր տեղեկություններով՝ Հայաստանի իրավապահները ԱԺ խորհրդարանականներին հարցնում են Արցախում տեղի ունեցած վերջին իրադարձությունների, մասնավորապես՝ Ադրբեջանի կողմից ապօրինի կալանավորված Արցախի նախկին նախագահ Արայիկ Հարությունյանի հրաժարականի պատճառների մասին՝ հետաքրքրվելով, թե ով կարող էր նրան ստիպել հրաժարական տալ: Ինչպես մեզ փոխանցեցին, մինչ օրս հարցաքննվել են Արցախի իշխանական թեմի պատգամավորները՝ Արայիկ Հարությունյանի՝ Արցախի «Ազատ հայրենիք - ՔԴՄ» խմբակցության պատգամավորները: Այս տեղեկությունները փորձեցինք պարզել անձամբ Արցախի պատգամավոր Գեղամ Ստեփանյանից, սակայն մեր զանգերը մնացին անպատասխան:



«Ժողովուրդ» օրաթերթին մանրամասներ են հայտնի դարձել ԲԴԽ նախկին նախագահի բնակարանի խուզարկության գործընթացից: Մասնավորապես, նրա տուն առավոտյան 9:30-ի սահմաններում գնացել են Հակակոռուպցիոն կոմիտեի 4 աշխատակիցներ ու սկսել են խուզարկությունը: Բնակարանից տարել են հեռախոսներ, ԲԴԽ նախկին նախագահի տան անդամների համակարգիչները, ու դեռ ավելին՝ կոմիտեի մեր աղբյուրների պնդմամբ՝ ողջ խուզարկությունը տեսանկարահանվել է: Վաղ առավոտից սկսված խուզարկությունը ավարտվել է 17:00-ին: Ասել է թե՛ մոտ 8 ժամ Վարդազարյանի բնակարանը, առանձնատունը, ավտոտնակը խուզարկելուց հետո այդպես էլ իրավապահները չեն գտել ցանկալի ծայնագրությունը: Նշենք, որ երեկ Հակակոռուպցիոն դատարանում Ռուբեն Վարդազարյանը հրաժարվեց որեւէ տեղեկություն տրամադրել իր տան խուզարկության վերաբերյալ, միայն նշեց, որ այն, ինչ փնտրել են, չեն գտել: Հիշեցնենք, որ 2022թ. հունիսի 20-ին Ռուբեն Վարդազարյանը հրավիրված ասուլիսում աղմուկահարույց ծայնագրություն էր հրապարակել, որով հիմնավորվում էր, որ ԲԴԽ նախագահի պաշտոնակատար Գագիկ Զհանգիրյանը փորձել է պարտադրել Վարդազարյանին հրաժարական տալ ԲԴԽ նախագահի պաշտոնից:



3 ամսային 33 վիճակագրական կոմիտեի հրապարակած պաշտոնական տվյալների՝ 33 պետական բյուջեի հիմնական ցուցանիշները 2024 թվականի հունվարին ունեցել են հետեւյալ տեսքը՝ պակասորդ՝ 68 մլրդ դրամ, ծախսեր՝ 116 մլրդ դրամ, եկամուտներ՝ 184 մլրդ դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ եկամուտները եւ պակասորդը նվազել են, սակայն բարձրացել է 33 պետական բյուջեի հաշվին ծախսերին հատկացվող ֆինանսական միջոցների սանդղակը գրեթե 23 միլիարդով: Ահա թե որն է պատճառը՝ ինչու են Հարկային օրենսգրքում փոփոխություններ արվում, բաց եւ թափանցիկ են դարձնում բանկային գաղտնիքը, որպեսզի հետեւեն բոլորի ֆինանսական ելքերն եւ մուտքերը: Ահա թե ինչու է պետությունը հարկում նույնիսկ փողոցով անցնողին, որպեսզի հոգա պետության աստղաբաշխական եւ անհիմն ծախսերը, որոնք հաճախ «պղծված-պղծով» կոռուպցիայի աղբյուր են դառնում: Ստացվում է, որ քաղաքացուն «տուգանքի մատերիալ» սարքող իշխանության նպատակն է հարկել հպարտ քաղաքացուն եւ հոգալ իրենց բարեկեցության ծախսերը:



ԶՐՈՒՅՑ

«ՀՀ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՄԱՐ ՀՀ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՆՈՒՆԻՑ»

Երեսանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության անդամ Արսակ Ջեյնալյանը ArmLur.am-ի հետ զրույցում խոսել է սրանադորսի բանկացման նախագծի եւ դրա հետեւանցների մասին:



-Տրանսպարտի գինն ունի ինքնարժեք. դրա ինքնարժեքն այսօրվա դրությամբ 230 դրամ է: Խնդիրը հետեւյալն է. սուբսիդիայի չափը որքան պետք է պակասեցնենք: Հիմա 7 միլիարդ դրամ տարեկան սուբսիդիա է տրվում տրանսպորտին: Այն, որ պետք է միասնական տոմսային համակարգ ներդրվի, դա միանշանակ է, որպեսզի նաեւ վերահսկողություն իրականացվի, հնարավոր լինի կանխատեսելի դարձնել ծախսերը եւ մուտքերը: Այս ամբողջը պետք է իրար հետ համադրվի եւ, այո, դա մեր նախընտրական քարոզարշավին էլ մենք ներկայացրել ենք, մեր ծրագրերի մեջ է մտնում, այո, պետք է սուբսիդիան պակասեցվի: 7 միլիարդ մենք չենք կարող տրամադրել տրանսպորտին: Այն, որ սուբսիդիա կմնա, դա էլ է հասկանալի, բայց այն պետք է պակասեցվի:

-Պարոն Ջեյնալյան, խնդիրն այն է, թե ինչ գնով է սա արվում: Այս ամենը արվում է առանց հասարակության սոցիալական վիճակը հաշվի առնելու: Գիտե՞ք՝ ինչ լուրջ սոցիալական խնդիրներ կան. կան ընտանիքներ, որտեղ երկու, երեք ուսանողներ կան. հիմա ինչպես է ազդելու նրանց սոցիալական վիճակի վրա այս ամենը:

-Տեսեք, Դուք լրագրողից անցաք քարոզիչի, սահուն անցում կատարեցիք, չպետք է կատարեք՝ կամ լրագրող եք,

կամ քարոզիչ: Ես Ձեզ հետ՝ որպես քարոզիչ, համաձայն չեմ. մենք նաեւ ունենք արտոնությունների որոշում, որով կտրամադրվեն համապատասխան արտոնություններ, եւ սոցիալական խնդիրներ ունեցող մարդիկ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն են եւ ՀՀ բովանդակության կրողն են, նրանք օտար

չեն եւ օտարի պետության մեջ չեն գտնվում: Սա իրականացվում է Հայաստանի ժողովրդի համար Հայաստանի ժողովրդի անունից: Այո, պետք է յուրաքանչյուրը մասնակցություն ունենա Հայաստանի կառավարմանը, Երեսանի կառավարմանը:

Զրույցը ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ



ՔՊ-ԱԿԱՆԻ ԿԻՆԸ՝ ՔՊ-Ի ԴԵՄ

Կոմիտասի անվան կոնսերվատորիան դուրս է գալիս ընդդեմ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության, եւ ռեկտոր Սոնա Հովհաննիսյանը պատրաստվում է քննարկում կազմակերպել եւ ընդդեմ նախարարության որոշում կայացնել:

Հիշեցնենք, որ ArmLur.am-ը գրել էր, որ հայտնի է դարձել այն 5 ուղղությունների ամբողջական ցանկը, որի շրջանակներում իրականացվելու է բուհերի օպտիմալացման եւ կամ խոշորացման ծրագիրը: Հայաստանում կլինեն բուհական կրթության 4 ուղղություններ՝ հետեւյալ բաշխումով՝

«Արվեստների», «Կրթական», «Դասական», «Տեխնոլոգիական»:

Հավելենք նաեւ, որ Կոնսերվատորիայի ռեկտորը՝ Սոնա Հովհաննիսյանը, ՔՊ խմբակցության նախկին պատգամավոր, այժմ ՀՀ-ի անդամ Արթուր Մանուկյանի կինն է:

Ստացվում է, որ ՔՊ խմբակցության նախկին պատգամավորի կինը դուրս է եկել իշխանության դեմ ի նպաստ կրթական համակարգի:

ԷՄՍԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՈՐՔԱՆ ՀՆԱԲԱՎՈՐ ԿՐԱՄԱՐԻ

«Հայաստանի եւ Եվրամիության հարաբերությունները զարգանում են, դրանք պետք է նոր դրսեւորումներ ու արտահայտություններ ունենան, եւ այդ արտահայտություններից մեկը կարող է լինել վիզաների ազատականացման բանակցությունների մեկնարկը»,- ասաց վարչապետ Նիկոլ Փաշինյանն ասուլիսում:

Վարչապետը հիշեցրեց իր հայտարարությունը, որ Հայաստանը պատրաստ է ԵՄ-ին լինել այնքան մոտ, որքան ԵՄ-ն հնարավոր կհամարի:

«Հիմա մենք պետք է հասկանանք, թե ԵՄ-ն ինչքան հնարավոր կհամարի: Դրանից հետո անենք հետեւություններ, բայց նաեւ կարելու է, թե ՀՀ ժողովուրդը որքան հնարավոր կհամարի: Բայց այս փուլում մենք գործընթացը տեսնում ենք այսպես՝ ԵՄ-ի հետ մեր հարաբերությունները շատ ակտիվ են: Եվ հիմա ԵՄ-ն է ասում, որ Հայաստանի եւ ԵՄ-ի հարաբերությունները երբեք այսքան խորը եւ ամուր չեն եղել: Եվ ես հուսով եմ, որ առաջիկայում կունենանք մի քանի որոշումներ, որոնք կլինեն այդ ուժեղ հարաբերությունների արտահայտությունը»,- ասաց Փաշինյանը:

Նա հավելեց՝ այնպես չէ, որ մինչեւ հիմա այդ արտահայտությունները չեն եղել: Հարաբերությունները զարգանում են, այն նոր դրսեւորումներ ու արտահայտություններ պետք է ունենա: Ըստ վարչապետի՝ օրինակ՝ այդ արտահայտություններից մեկը կարող է լինել վիզաների ազատականացման բանակցությունների մեկնարկը ՀՀ-ի եւ ԵՄ-ի միջեւ: Հաջորդ թեմաներից մեկը կարող է լինել առեւտրային արտոնյալ պայմանների տրամադրումը ՀՀ-ում արտադրված ապրանքների:

Հայաստանն ու ԵՄ-ն ունեն շատ լայն օրակարգ: ՀՀ-ն պատրաստ է այդ օրակարգն ընդլայնել ու խորացնել:

ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՈՉ ՄԻԱՅՆ ԱՐՑԱԽՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

«Եթե մենք այս ծրագիրը անենք միայն ԼՂՀ բնակիչների համար, լարում կառաջանա ՀՀ քաղաքացիների մոտ: Մենք ուզում ենք այնպիսի ծրագիր ստեղծել, որ միայն բռնի սեղանակալների չվերաբերի: Մարդիկ կարող են ասել, թե ինչու մենք ծառայում ենք բանակում, բնակարանի խնդիր ունենք եւ ղեկավարն Բյուզեյի միջոցներից մեզ ոչինչ չեմ սախա:



3 մլն դրամը մենք դիտարկել ենք որպես բազային չափ, որի վրա կարող են լինել եւ կլինեն գործակիցներ: Ցանկեր կլինեն, որով պայմանավորված՝ կավելանա գումարը: Օրինակ՝ զոհվածի ընտանիք է, ծառայող է, վիրավոր է եւ այլն»,- երեկ՝ ասուլիսի ժամանակ, հայտարարեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Հիշեցնենք, որ երեկ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հստակ որոշում ունի՝ բռնի տեղահանված արցախցիներին փոխանցված միջազգային գումարների հետ կապված: Հիշեցնենք, որ 2023 թվականին նախատեսված էր Արցախին փոխանցել 144 մլրդ ՀՀ դրամ: Այս մասին ԱԺ-ում 2023 թ. պետական բյուջեի քննարկման ժամանակ հայտարարել էր Էկոնոմիկայի նախկին նախարար Տիգրան Խաչատրյանը: Եթե այս թվին՝ 144 մլրդ դրամին, գումարենք նաեւ Ճապոնիայի կողմից արցախահայերին տրամադրված 2 միլիոն դոլարը, որը համարժեք է 820 մլն դրամի, ավելացնենք ԱՄՆ-ի կողմից տրամադրված 11 մլն դոլարը, որը համարժեք է 4 մլրդ 716 մլն դրամի, նաեւ Եվրահանձնաժողովի

կողմից փոխանցված 10.4 մլն եվրոյին համարժեք 4 մլրդ 506 մլն դրամը, Լատվիայի կողմից հատկացված 350 հազար եվրոյին համարժեք 151 մլն դրամը, Շվեյցարիայի կողմից տրամադրված 1,5 մլն ֆրանկին համարժեք 675 մլն դրամը, Կանադայի կողմից տրամադրված 2,5 մլն դոլարին համարժեք 1 մլրդ 25 մլն դրամը, կստացվի

155 մլրդ 893 մլն դրամ: Բանն այն է, որ Նիկոլ Փաշինյանը որոշել է այս գումարները այլ կերպ ծախսել: Նա սահմանել է թեորեմ, ըստ որի՝ չեն առանձնացվելու արցախցիները, իսկ գումարները ծախսվելու են ոչ թե հենց արցախցիների, այլ ՀՀ բոլոր անտուն քաղաքացիների համար:

Զ. ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԻՐԱՎԻՃԱԿ

ՉՍՏԱՅՎԵՏ՝ ԷԼԻ ԿՓՈՐՁԵՆՔ

«ՈՐՊԵՍՁԻ ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱ ՀՀ ԼՈՒԾԱՐՈՒՄ»

Ն. ՓԱՇԻՆՅԱՆԸ

ԽԱՔԵԼ Է. ՄԱՍ 180

Նիկոլ Փաշինյանը Հանրապետության հրապարակում հրավիրված հանրահավաքի ժամանակ՝ 2018 թվականին, երբ ամփոփում էր իր պաշտոնավարման 100 օրը, հայտարարեց, որ մեր նպատակը մարդկանց բանտերը լցնելը չէ, բայց եւ ոչ մեկ չի խուսափի պատասխանատվությունից: 2020 թ. մայիսի 16-ին Նիկոլ Փաշինյանը կայացած մամուլի ասուլիսի ընթացքում ընթերցեց «100 փաստ՝ Նոր Հայաստանի մասին», որի 79-րդը հետեւյալն էր. «Վերջին տարիներին դատական պատասխանատվության ենթարկված անձանց թիվը շարունակում է նվազել. մասնավորապես, 2017 թվականին դատապարտվածների թիվը եղել է 2410, 2018 թվականին՝ 1963, իսկ 2019 թվականին՝ 1556 հոգի»: Սակայն, Նիկոլ Փաշինյանի նույն այդ ելույթի տարում Հայաստանում ազատազրկվածների թիվը կտրուկ աճեց: Մասնավորապես, «Ժողովուրդ» օրաթերթը ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական տվյալներից պարզեց, որ իրականում Նիկոլ Փաշինյանի իշխանության օրոք բանտերը լցվել են: Պատկերը հետեւյալն է՝

- 2018թ. - 1963 ազատազրկված,
- 2019թ. - 1556 ազատազրկված,
- 2020թ. - 1954 ազատազրկված,
- 2021թ. - 2171 ազատազրկված,
- 2022թ. - 2018 ազատազրկված:

Ի դեպ, նույն պաշտոնական տվյալներով՝ 2019-2022 թվականներին Հայաստանում մահացել է 68 ազատազրկված անձ:

ՍՈՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՈՐՆ Է, ԲԱՔՈ, ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔ

Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանը վստահեցրեց՝ երբեք՝ ոչ մի քննարկման ժամանակ խոսք չի եղել եւ խոսք չի կարող լինել Տավուշի մարզի որեւէ գյուղ Ադրբեջանին հանձնելու մասին:

ՀՀ վարչապետն այս մասին հայտատարեց մարտի 12-ի ասուլիսին՝ ի պատասխան այն հարցի, որ Ադրբեջանը շարունակում է տարածքային պահանջներ ներկայացնել ՀՀ-ին՝ հայկական կողմից պահանջելով իրենց հանձնել Տավուշի մարզի 4 գյուղ:

Նիկոլ Փաշինյանի կարծիքով՝ այդ հարցի շուրջ կա որոշակի թերըմբռնում եւ թյուրըմբռնում:

«Նախ արձանագրենք, թե որն է Հայաստանի Հանրապետությունը, որպեսզի այդ արձանագրումից ելնելով՝ կարողանանք հստակ ձեւակերպել, թե որտեղ, ինչպես Ադրբեջանն ունի տարածքային պահանջներ ՀՀ-ի նկատմամբ, եւ որտեղ է, որ, ըստ էության, չունի կամ հնարավոր է՝ չունի տարածքային պահանջներ Հայաստանի Հանրապետության նկատմամբ», - նշեց Փաշինյանը՝ ներկաներին ցույց տալով ՀՀ տարածքի քարտեզը:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարում է, որ այն գյուղերը, որոնք Ադրբեջանը պահանջում է, երբեք չեն եղել ՀՀ ինֆոխիսան սահմանում:

Մարտի 12-ի ասուլիսին Փաշինյանը, պատասխանելով լրագրողի այն հարցին, թե Ադրբեջանը շարունակում է տարածքային պահանջներ ներկայացնել ՀՀ-ին՝ պահանջելով հայկական կողմից իրենց վերադարձնել Տավուշի մարզի 4 գյուղ, ընդգծեց, որ Հայաստանի տարածքում ադրբեջանական մամուլի կողմից բարձրաձայնվող գյուղերի անուններով գյուղեր երբեք չեն եղել ոչ միայն խորհրդային ժամանակներում, այլեւ դրանից հետո:

«Ասվում է, որ ՀՀ կառավարությունը պատրաստվում է Տավուշի մարզի գյուղեր հանձնել Ադրբեջանին: Երբեք՝ ոչ մի քննարկման ժամանակ, խոսք չի եղել եւ խոսք չի կարող լինել Տավուշի մարզի որեւէ գյուղ հանձնելու մասին», - ընդգծեց Փաշինյանը:

Նախ վարչապետը նշեց, որ, իր կարծիքով, այդ հարցի շուրջ կա որոշակի շփոթ, որոշակի թերըմբռնում եւ թյուրըմբռնում առաջարկելով նախ արձանագրել, թե որն է Հայաստանի Հանրապետությունը:

«Նախ արձանագրենք, թե որն է Հայաստանի Հանրապետությունը, որպեսզի այդ արձանագրումից ելնելով՝ կարողանանք հստակ ձեւակերպել, թե որտեղ, ինչպես Ադրբեջանն ունի տարածքային պահանջներ ՀՀ-ի նկատմամբ, եւ որտեղ է, որ, ըստ էության չունի կամ հնարավոր է՝ չունի տարածքային պահանջներ ՀՀ-ի նկատմամբ», - նշեց Փաշինյանը՝ ներկաներին ցույց տալով ՀՀ տարածքը քարտեզի վրա եւ ընդգծելով, որ անկլավային եւ ոչ անկլավային գյուղերը, որոնք Ադրբեջան է պահանջում, ՀՀ ինքնիշխան տարածքում չեն:

«2023 թվականի սեպտեմբերին արտաքին ուժերը ուզում էին լուծել Հայաստանի հարցը եւ փակել այն ամբողջությամբ», - հայտարարեց վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

«1996 թվականից Ղարաբաղի հարց գոյություն չի ունեցել, եւ 2023 թվականի սեպտեմբերին արտաքին ուժերը ուզում էին Հայաստանի հարցը լուծել եւ փակել ամբողջությամբ:

Ավելին ասեմ՝ ինչպե՞ս եղավ, որ 2021 թվականի մայիսին ադրբեջանական զորքերը Հայաստանի ինքնիշխան տարածք ներխուժեցին այն ժամանակ, երբ խորհրդարանը լուծարված էր, եւ վարչապետը հրաժարական էր տվել՝ երկրում ոչ խորհրդարան կար, ոչ կառավարություն: Ի՞նչու դա տեղի ունեցավ 2021 թվականի մայիսի 12-ին, երբ բոլոր որոշումները ու-



ժի մեջ էին մտել: Օրինակ՝ ինչո՞ւ մայիսի 5-ին, մայիսի 2-ին, ապրիլի 30-ին, ապրիլի 25-ին տեղի չունեցավ: Այդ հարցը չի կարող չծագել: Եվ մյուս կողմից էլ ասում էին, թե ինչու ռազմական գործողություններ չեն սկսում, գնացե՛ք: Պատասխանը շատ պարզ է՝ ամբողջ հաշվարկը դրա մեջ էր, որ պատերազմ սկսվի, Հայաստանի Հանրապետությունը ի վիճակի չլինի ընտրություններ անցկացնել, եւ որի արդյունքում 2021 թվականի ամռանը դե-յուրե եւ դե-ֆակտո տեղի կունենա Հայաստանի Հանրապետության լուծարում: Սա է ամբողջ պատմությունը, եւ այս պատմությունը 2018 թվականին չի սկսել: Այս պատմությունը սկսել է 1996 թվականից, զարգացել 1999 թվականի հոկտեմբերի 27-ով, 2003 թվականի, 2008 թվականի իրադարձություններով եւ այդպես շարունակվել», - ընդգծեց վարչապետը:

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը պարզաբանեց, թե ինչու է 2023 թվականին Լեռնային Ղարաբաղի դեմ ադրբեջանական ագրեսիայի ժամանակ հայտարարել, որ այդ պահին Լեռնային Ղարաբաղի քաղաքացիական բնակչությանն ուղիղ սպառնալիք չկա: Վարչապետը նշեց, որ ինքն այդ հայտարարությունը արել է, որ Լեռնային Ղարաբաղի հայերին Լեռնային Ղարաբաղում մնալու հնարավորություն ստեղծվի:

«Ես տեսնում էի, որ ամեն ինչ արվում է, որպեսզի Լեռնային Ղարաբաղի հայերը դուրս գան ռոպե առաջ: Եվ իմ ուղերձն այն էր, որ պետք չի ռոպե առաջ դուրս գալու մասին մտածել, որովհետեւ դուրս

գալու սցենարը միշտ էլ կա՝ այսօր, վաղը: Եվ այդ պահին ռազմական գործողությունները դադարեցված են եղել, ինչը չի նշանակում, որ մենք քաղաքական գնահատականը փոխել էինք էթնիկ գտումների վտանգի: Իմ հայտարարությունից հետո, չեմ հիշում, Լեռնային Ղարաբաղում քաղաքացիական բնակչության շրջանում սպանություններ եղել են, թե ոչ: Ցավալի դեպք եղավ բենզալցակայանի հետ կապված, որը էլի ռոպե առաջ դուրս գալու տրամաբանության մեջ էր, երբ ամբողջ կառավարումը կորցնելով՝ մարդկանց ասում էին՝ գնացե՛ք, այդ անգարներից բենզին վերցրե՛ք՝ առանց վերահսկողության եւ առանց որեւէ բանի», - ընդգծեց Փաշինյանը:

Վարչապետը այդ օրերին տեսնում էր, որ արտաքին ուժեր կային, որոնք լատե դրոյում էին էթնիկ գտումները կազմակերպող հիմնական ուժին եւ նրանց աջակցում, որ Լեռնային Ղարաբաղի հայերը ռոպե առաջ դուրս գան:

«Ի՛նչի համար. որովհետեւ հայտարարել էին Հայաստանում իշխանափոխության մեկնարկի մասին եւ տեսնում էին, որ Հայաստանում իրենց ռեսուրսները չեն հերիքում հեղափոխություն անելու համար, եւ նրանց հարկավոր էր թեկուզ Ղարաբաղի գնով ռեսուրս բերել Հայաստան, որպեսզի այստեղ հեղափոխություն տեղի ունենա: Եվ միջին վիճակագրական լրահոսի ընթերցողը սա կտեսներ եւ չի կարող չտեսնել մինչեւ օրս: Եվ այդ նկրտումները շարունակվում են: Չստացվե՛ց՝ էլի կփորձենք», - եզրափակեց Փաշինյանը:

ՍՏԱՅՈՒՑ Է

ՍԹԱՓՈՒԹՅՈՒՆ Է ԱԿՆԿԱԼՈՒՄ

«Հայաստանը շարունակում է մնալ ՀԱՊԿ-ի դաճակիցը, միեւնույն ժամանակ, կազմակերպությունը Հայաստանի ղեկավարության կողմից ֆաղափան սրբափոխում է ակնկալում», - ՏԱՍՍ գործակալությանը սված հարցազրույցի ընթացքում նշել է Հավաքական անվտանգության դաշնագրի կազմակերպության գլխավոր ֆուրսուդար Իմանդակի Թասմադամբեովը:

«Չեմ թաքցնի, որ Հայաստանի էլիտաների մասով որոշակի իրադարձություն-

ներ եւ տրամադրություններ մտահոգիչ են, սակայն մենք ակնկալում ենք Հայաստանի քաղաքական ղեկավարության քաղաքական սրբափոխությունը եւ կազմակերպության նկատմամբ տարբեր սցենարների իրականացման հեռանկարների հավասարակշռված գնահատականը: Ընդգծեմ, որ Հայաստանը մնում է մեր դաշնակիցը, առկա բոլոր պարտավորությունները մնում են ուժի մեջ», - նշել է քարտուղարը՝ անդրադառնալով այն հարցին, թե արդյոք ՀԱՊԿ-ում սպասում են կազմակերպության անդամակցության դադարեցման

վերաբերյալ Հայաստանի կողմից հայտարարության:

Իմանդակի Թասմադամբեովը հավելել է, որ ինչպես ինքը, այնպես էլ քարտուղարությունն աշխատում են կազմակերպությունում ընդունված կանոնակարգերին եւ ընթացակարգերին համապատասխան:

«Մենք, բնականաբար, մեր վերլուծաբանների եւ նրանց հասանելի գործիքակազմի ուժերով վերլուծում ենք իրավիճակը Հայաստանի շուրջ եւ իրավիճակը Հայաստանի ու կազմակերպության փոխհարաբերություններում», - եզրափակել է նա:

ՂԱՏԱԿԱՆ ՔԱՇՔՇՈՒԿ

ՔՐԵԱԿԱՆ ԱՐԿԱԾՆԵՐ՝ «ՆՈՐ ԶՈՎՔ»-ՈՒՄ

Մեզ հայտնի դարձավ, որ Գուրգեն Ասլանյանին մեղադրանք է առաջարկել, որ ուրիշ գույքի գաղտնի հափեսակություն կատարելու նպատակով...



ընդհանուր 300.000 ՀՀ դրամ գումար, եւ նշված գումարը կրկին վճարային տերմինալից մաս-մաս մուտքագրել է իր խաղային հաշվին...

մաճայնությամբ առանձնապես խոշոր չափերով հարկեր չվճարելը, որը պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով...

ՔՍՈՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ

ԲՈՆՈՒԹՅՈՒՆ՝ ԱՆՉԱՓԱՀԱՄ ԵՎ ԱՏՄԱՐԸ

Դատախազը 2024 թվականի փետրվարի 20-ին հաստատել է անչափահասի նկատմամբ բռնություն կիրառած՝ Ներքին գործերի նախարարության ոստիկանության Տավուշի մարզային վարչությունում ղեկավար պաշտոն զբաղեցնող անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությունը...

Հիշեցնենք, որ Ներքին գործերի նախարարության ոստիկանության Տավուշի մարզային վարչությունում ղեկավար պաշտոն զբաղեցնող անձը 2023 թվականի ապրիլի 10-ին՝ աշխատանքային օրվա ավարտից հետո՝ ժամը 23:30-ի սահմաններում, իրեն ամբողջով ավտոմեքենայով գնացել է Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի ռեստորանային համալիրներից մեկը...

Մատուցվող ծառայության դիմաց նախապես վճարելու կրկնակի պահանջից բարկացած՝ ոստիկանության բարձրաստիճան պաշտոնատար անձը ձեռքի ափով երկու անգամ հարվածել է անչափահասի դեմքին, ապա հրելով տարել համալիրի խոհանոց: Խոհանոցում համալիրի խոհարարի ներկայությամբ երկու ձեռքի ափերով առնվազն 23 հարված է...

հասցրել անչափահասի գլխին եւ մարմնի տարբեր մասերին (հարվածները հիմնականում ուղղվել են անչափահասի դեմքին եւ գլխին):

2023 թվականի մայիսի 10-ին նախաձեռնվել էր քրեական վարույթ:

2023 թվականի մայիսի 29-ին քննիչի կողմից հանրային քրեական հետապնդում չհարուցելու մասին միջնորդություն էր ներկայացվել վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազին, որը դատախազի կողմից բավարարվել էր: Սակայն 2023 թվականի հունիսի 2-ին Տավուշի մարզի դատախազի կողմից վերացվել էր հանրային քրեական հետապնդում չհարուցելու վերաբերյալ հսկող դատախազի որոշումը, եւ քրեական հետապնդում էր հարուցվել ոստիկանության բարձրաստիճան պաշտոնատար անձի նկատմամբ: Քրեական օրենսգրքի 196-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (անչափահասին ֆիզիկական ուժով կամ հոգեկան ուժով տառապանք պատճառելը):

Հիշեցնենք, որ ArmLur.am-ը բացառիկ տեսանկյուն էր հրապարակել՝ վերոհիշյալ դեպքի հետ կապված:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ

Ռուբեն Վարդազարյանը մեղադրվում է արդարադատության իրականացմանը խոչընդոտելու համար: Վերջինս, ըստ մեղադրանքի, 2019թ. հուլիսի 19-ից զբաղեցնելով ԲԴԽ նախագահի պաշտոնը, հանդիսանալով դատական իշխանու-

թյան մարմնի ղեկավար աշխատող, միջամտել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Անդրանիկ Սիմոնյանի կողմից արդարադատության իրականացմանը:

Ըստ Սիմոնյանի հաղորդման՝ Վարդազարյանը Ալավերդից Վահագն անունով հայտնի Վահագն Աբգարյանի գործով է իրեն դիմել: Վահագն Աբգարյանը մեղադրվում է Ալավերդու բնակիչ Կամր Փիրուզյանի սպանությունը կազմակերպելու, ինչպես նաեւ սպանության գործով իր օգտին գործողություններ կատարելու համար կաշառք տալու համար: Գործում առկա է նաեւ ծայրագրություն: Վերջինս, ըստ մեղադրանքի, Signal հավելվածի միջոցով կապ է հաստատել Անդրանիկ Սիմոնյանի հետ եւ համոզելու, խնդրանքի եղանակով վերջինից պահանջել փոխել Աբգարյանի խափանման միջոցը՝ կալանավորումը:

Վարդազարյանն իրեն առաջադրված մեղադրանքը չի ընդունում՝ նշելով, որ իր դեմ քաղաքական հետապնդում է իրականացվում:

Այսօր դատարան էին հրավիրել վկա, Դատական դեպարտամենտի նախկին ղեկավար Կարեն Փուլադյանին, որը չէր ներկայացել դատարան: Դատարան դիմում էր ներկայացրել Ռուբեն Վարդազարյանը՝ նշելով, որ օրերս վիրահատվել է ու առողջական խնդիրներից ելնելով՝ պետք է գնա հետագա բուժման համար Ֆրանսիա, ուստի անհրաժեշտ է բացակայելու արգելքը վերացնել եւ թույլ տալ հատել ՀՀ սահմանը, ինչը դատավոր Վահե Դումազյանը բավարարեց:

ՔՍՈՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԶԳՈՒՅՇ ԼԻՆԵԼՈՒ ԶՈՐԴՈՐ

ՊԱՏՌԵԼ Է ԳՐԱՄԸ

ՆԳՆ ոստիկանության Բազումի բաժնի քրեական հետախույզներն օպերատիվ տվյալներ էին ստացել, որ Վանաձորի Պարույր Սեւակի փողոցի բնակիչ 19-ամյա երիտասարդը տանը կեղծ 20 հազար դրամանոցներ է տպել եւ իրացնելու նպատակով տվել 14-ամյա մի տղայի, որը երկու հասակակիցների հետ փորձել է դրանք իրացնել:

Ձեռնարկված միջոցառումների եւ բացատրական աշխատանքի շնորհիվ մարտի 11-ին 14-ամյա տղան ծնողի հետ հրավիրվել է Բազումի բաժին:

19-ամյա երիտասարդը եւ երեք պատանիները ներկայացվել են Լոռու մարզային քննչական վարչություն:

Քրեական հետախույզները պարզել են, որ կեղծ փողով ամբողջով հաջողվել էր անել Ոսանողական փողոցի շինանյութի խանութից, գնել էին 1500 դրամ արժողությամբ երեք դանակ եւ վերցրել 20 հազարի մանրը:

Պատանիները կեղծ թղթադրամով փորձել էին գնումներ կատարել Լաւե Աղայան փողոցի մթերային խանութից, սակայն վաճառողը 20 հազար դրամի մանր չէր ունեցել: Իսկ երբ փորձել էին գնումներ կատարել այլ խանութներից, վաճառողները, նկատելով թղթադրամի կեղծ լինելը, նրանց դուրս էին արել: 14-ամյա տղան, վախենալով, որ կբռնվի, պատռել է նետել էր թղթադրամը:

Լոռու մարզային քննչական վարչությունում կատարվում է քննություն:

Ոստիկանությունից հորդորում են զգույշ լինել կանխիկ ամետուր անելիս, իսկ կեղծ դրամ նկատելիս դիմել իրավապահներին:

Դատական համակարգում ուշագրավ զարգացումներ են. ԲԴԽ դատավոր անդամի թափուր տեղի համար իրենց թեկնածություններ են առաջադրել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Վազգեն Ռշտունին եւ Ռուբիկ Մխիթարյանը, որի անվան շուրջ աղմկահարույց պատմություններ են:

Բանն այն է, որ դատական համակարգը լքում են դատավորներ, որոնց հեռացման պատճառը խորը արմատներ ունի: Մասնավորապես՝ Ռուբիկ Մխիթարյանի «թեթեւ ձեռքով» իշխանություններին է հասել գրագրություն, որտեղ դատավորները ներքին քննարկումներ են ունեցել, հայիտյանքներ են հնչել իշխանության հասցեին: Եվ ահա ArmLur.am-ին հասած լուրերի համաձայն՝ գրագրությունը իշխանություններին հասցրել է Ռուբիկ Մխիթարյանը:

Եվ ահա դատական համակարգում այս քառուցից հետո, Մխիթարյանը ԲԴԽ անդամ դառնալու դիմումը հետ է վերցրել, քանի որ դատական համակարգը բավականին քննադատաբար է մոտեցրել նրա այս քայլին ու առհասարակ չեն շփվում նրա հետ, ուստի գիտակցելով, որ նրան չեն ընտրի վերջինս դիմումը հետ է վերցրել: Ստացվում է՝ ԲԴԽ միակ թեկնածուն մնում է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Վազգեն Ռշտունին:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● Ըստ ոստիկանության տվյալների՝ մարտի 11-ից մարտի 12-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 120 դեպք, որոնցից 2-ը՝ նախկինում կատարված:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՀԻՎԱՆԳՈՒԹՅԱՆ ԲՈՆԿՈՒՄ ԻՋԵՎԱՆՈՒՄ

Վերջին ժամանակաշրջանում Իջեան քաղաքում տարածվել են վեներական հիվանդություններ: Դրանք տարածվել են գլխավորապես թեթև վարքի տեր երկու ջահել կանանց միջոցով: Ըստ Իջեանից ստացված տեղեկությունների՝ վեներական հիվանդություններով վարակվածները տարբեր տարիքի, զբաղմունքի տեր բազմաթիվ անձինք են, դրան թվում նաև Իջեանի հանրակրթական դպրոցների բարձր դասարանների աշակերտ տղաներ կան: Դպրոցականները բուժման համար Իջեան քաղաքի բուժօգնություններ չեն դիմել:

ԱՆՈՐՈՇ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ

Նախկինում Տավուշի մարզպետները ամեն ամիս մարզի Դիլիջանի, Նոյեմբերյանի, Բերդի տարածաշրջաններում քաղաքացիների ընդունելություն էին կատարում, լսում նրանց խնդիրները, ըստ հնարավորի՝ լուծում տալիս դրանց: 2021թ. ապրիլի 8-ից ցայսօր Տավուշի մարզպետ պաշտոնավարող Հայկ Ղալունյանին նախկինում տեղեկատվական հարցում ենք ուղարկել՝ հարցնելով՝ որպես Տավուշի մարզպետ, Բերդ, Դիլիջան, Նոյեմբերյան համայնքներում ինչ ժամանակացույցով է քաղաքացիների ընդունելություն կատարում, վերջին անգամ այդ համայնքներում ե՞րբ է քաղաքացիների ընդունելություն կատարել: Տավուշի մարզպետարանից պատասխանել են. «Կապված ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի կանոնադրության փոփոխության հետ, փոփոխություններ են կատարվում նաև ներքին կանոնակարգերում, այդ թվում՝ նաև քաղաքացիների ընդունելության կանոնակարգն է թարմացվում, եւ այս պահին դեռևս ֆիքսված ժամանակացույց չկա: Քաղաքացիներին բոլոր բնակավայրերից, ըստ անհրաժեշտության, մարզպետի աշխատակազմում, համայնքապետարանների աշխատակազմում հերթագրում են, եւ ՀՀ Տավուշի մարզպետը նրանց ընդունում է կամ մարզպետարանում, կամ բնակավայրերում, որոնցում հաճախակի է լինում աշխատանքային այցերով»: 2024թ. փետրվարի 21-ին նոր հարցում ենք ուղարկել մարզպետին՝ նրան հարցնելով՝ քաղաքացիների ընդունելության կանոնակարգը թարմացնելուց հետո ներկայումս Տավուշի մարզպետը մարզի Նոյեմբերյան, Բերդ, Դիլիջան խոշոր համայնքներում քաղաքացիների ընդունելությունն ինչ ժամանակացույցով է կատարում: Մարզպետարանից շատ անորոշ, ապառնի ժամանակին առնչվող պատասխան են տվել՝ նշելով. «ՀՀ Տավուշի մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելությունը տեղի կունենա յուրաքանչյուր ամսվա 1-ին եւ 2-րդ կեսին ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմում կամ մարզի որեւէ համայնքապետարանում»:

ՈՍՎԱՆ ՍՈՐՈՍՅԱՆ Տավուշ

ՄԵԾ ԱՆՈՐՈՇՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

ԳՆԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՆՊԱՏԱԿ

ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը մարտի 12-ի նիստում որոշել է վերաֆինանսավորման տոկոսադրույքն իջեցնել 0.25 տոկոսային կետով՝ սահմանելով 8.5 տոկոս: Այդ մասին ասուլիսում հայտարարեց ԿԲ նախագահ Մարտին Փալսյանը:

Կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպո գործիքի տոկոսադրույքը սահմանվել է 10, իսկ բանկերից ներգրավվող դրամական միջոցների տոկոսադրույքը՝ 7 տոկոս: Խորհրդի գնահատմամբ՝ վերաֆինանսավորման ավելի ցածր տոկոսադրույքն անհրաժեշտ է միջնաժամկետում գնաճի 4% մակարդակի եւ գների կայունության նպատակի իրագործման համար: ԿԲ-ի կողմից իրապարակված փաստաթղթի համաձայն՝ 12-ամսյա գնաճը շարունակել է նվազել եւ 2024 թվականի փետրվարին կազմել է -1.7 տոկոս: Նմանապես շարունակել է նվազել նաև 12-ամսյա բնականոն գնաճը, որը հունվարին կազմել է -0.4 տոկոս:

«Համաշխարհային տնտեսությունից փոխանցվող գնաճային ազդեցությունները Հայաստանի տնտեսության վրա շարունակում են զգալիորեն թուլանալ: 2024 թվականի առաջին եռամսյակում համաշխարհային եւ Հայաստանի հիմնական առետրային գործընկեր երկրների տնտեսական ակտիվությունը շարունակում է դանդաղել, իսկ տարեկան գնաճը՝ նվազել: Այնուամենայնիվ, գնաճային միջավայրը պահպանվում է բարձր մակարդակներում՝ պայմանավորված աշխատաշուկայից աճանցվող գնաճային ճնշումներով: Սպասվում է, որ առաջիկայում հիմնական գործընկեր երկրների կենտրոնական բանկերը կպահպանեն դրամավարկային քաղաքականության զսպող դիրքը, ինչը կարող է ռիսկեր ստեղծել համաշխարհային պահանջարկի կրճատման եւ գնաճի նվազման համար: Մերձավոր Արեւելքում աճող աշխարհաքաղաքական լարվածության պայմաններում մատակարարման շղթաների խաթարման, ինչպես նաև Չինաստանում ֆինանսատնտեսական խնդիրների սրման հետեւանքով առկա են Համաշխարհային տնտեսական աճի դանդաղման եւ միջազգային ապրանքահումքային շուկաներում գների տատանողա-



կանության հետ կապված ռիսկեր»,- նշեց Մարտին Փալսյանը:

ԿԲ նախագահը նկատեց, որ 2023 թվականի չորրորդ եռամսյակում Հայաստանում պահպանվել է տնտեսական ակտիվության բարձր մակարդակը, ինչին շարունակել է նպաստել շինարարության եւ առետրային ոլորտների բարձր աճը:

«Հայաստանում գնաճը շարունակում է մնալ ցածր, ինչին հիմնականում նպաստել են ՀՀ կենտրոնական բանկի կողմից իրականացված զսպող դրամավարկային քաղաքականությունը, արտաքին հատվածից փոխանցվող գնանկումային ազդեցությունները եւ դրամի արժեւորման հետեւանքները: Միաժամանակ աշխատուժի առաջարկի ավելացումը որոշակիորեն նպաստել է համախառն պահանջարկի եւ առաջարկի միջեւ անհավասարակշռության կրճատմանը, ինչն էլ արտահայտվել է աշխատավարձերի եւ կոշտ գներով աչքի ընկնող ապրանքներ-

րի եւ ծառայությունների գնաճի ու գնաճային սպասումների նվազմամբ»,- մասնաբաժնեց նա:

Մեծ անորոշության պայմաններում, հաշվի առնելով գների կայունության նպատակին հասնելու իր հանձնառությունը, ԿԲ խորհուրդն իր քննարկումների ընթացքում դիտարկում է բազմաթիվ սցենարներ: Հավասարակշռելով դրանց ռիսկերը՝ խորհուրդը որոշել է շարունակել դանդաղ տեմպերով աստիճանական թուլացումը: Խորհուրդը շարունակելու է դիտարկել տնտեսության զարգացման սցենարները եւ պատրաստ է ձեռնարկել համարժեք գործողություններ՝ միջնաժամկետ հորիզոնում գնաճի 4 տոկոս մակարդակի եւ գների կայունության նպատակի ապահովման համար:

Նախկինի պես ԿԲ խորհուրդը վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ որոշում է կայացնելու տարեկան 8 անգամ:

ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԱՆՈՑ

ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻ ԱՊԱԳԱՅՈՎ ՄՏԱԿՈՉ

Համացանցում ակտիվ օրջանավում են լուրեր, որ Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիան փակվում է, սակայն թե՛ Կոնսերվատորիայի ղեկավարը, թե՛ ԿԿՄՄ-ն հերքում են այդ փաստը՝ նշելով, որ վերանորոգվելու է Կոնսերվատորիան:

Կոնսերվատորիայի ֆեյսբուքյան էջում նախօրեին տարածվել էր հայտարարություն, որում նշված էր, որ տեղի է ունենալու համակոնսերվատորիական ժողով:

ՋԼՄ-ների մուտքը ժողովին արգելված էր, սակայն Կոնսերվատորիայի բակում հավաքված շատ մարդիկ հայտնեցին իրենց դժգոհությունը:

ArmLur.am-ի հետ զրույցում ՀՀ վաստակավոր արտիստ Աննա Մայլիյանն

ասաց, որ ինֆորմացիան տարատեսակ է, եւ այս խնդրով այսօր նրանք չէ, որ պետք է զբաղվեին:

«Մենք այսօր չպետք է զբաղվեինք նման քարոզարարական խնդրով, ինչպիսին է Կոնսերվատորիայի շենքի լուծարումը, Կոնսերվատորիա չլինելը: Ես կարծում եմ, որ Կոնսերվատորիայի չլինելու հարցն է այսօր, որովհետեւ այդ ուսանողական քաղաքը, որի մասին խոսք է գնում, շատ լավ է, թող կառուցվի այդ քաղաքը: Այդ քաղաքը, որպես ակտիվ տարբերակ, ժամանակակից տարբերակ, շատ լավ է, բայց պոկել քաղաքի սրտից իր ավանդական Կոնսերվատորիան, որը շատ մեծ նշանակություն ունի քաղաքի համար, մեր մշակույթի համար, մեր մշակույթի սիրտն է Կոնսերվատորիան»,- ասաց Մայլիյանը:

Մայլիյանը մեզ հետ զրույցում նշեց, որ շենքը կարող էր վերանորոգվել, ինչին մասին էլ նրանց տեղեկացրել են:

«Մենք կարծես տեղեկացված էինք, որ պետք է վերանորոգում լինի. այդ չափերում ակտիվորեն խորհում, ի դեպ, որը հիմա մյուս կողպատում է տեղի ունենում, արդեն կարծեմ երկրորդ կամ երրորդ տարին է, որ մեզ բոլորիս համար դժվարություններ է ստեղծել»,- նշեց Աննա Մայլիյանը:

Անդրադառնալով Կոնսերվատորիայի քանդմանը՝ Մայլիյանն ասաց. «Լավ, չի քանդվելու, հրաշալի հյուրանոցի շենք է: Կվերանորոգվի, կդառնա հյուրանոց: Սենյակները արդեն պատրաստ են, կարելի է համապատասխան ինչ-որ խողովակներ բերել, ամեն մի սենյակում զուգարան, «դուշ» դնել, վերջանում է հարցը»:

ԱՆՆԱ ՄՈՒՊԻՈՆՅԱՆ

● Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 10 պատահար. 13 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:



Էջը՝ ՄԱՌԻԱՍ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

Լիզինգ

ՀԱՐՑ. Հնարավո՞ր է արդյոք լիզինգով ձեռք բերել նաեւ ագրոդարենային ոլորտի սարքավորումներ:
Իրինա Գասպարյան (46 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. 2018 թվականի հուլիսից մեկնարկել է «ՀՀ-ում ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության» լիզինգի պետական աջակցության» ծրագիրը, որի հիմնական նպատակը ագրոպարենային ոլորտի տնտեսավարողներին մատչելի պայմաններով, մասնավորապես՝ ֆինանսական վարձակալության մեխանիզմների կիրառմամբ սարքավորումների մատակարարումն է: Լիզինգը տրամադրվում է դրամով մինչև 8 տարի ներառյալ մարման ժամկետով, տարեկան մինչև 11 տոկոս տոկոսադրույքով, որի մինչև 7 տոկոսային կետը սուբսիդավորում է, որպեսզի լիզինգառուի կողմից վճարվող լիզինգի տարեկան տոկոսադրույքը կազմի 4 տոկոս, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ հաստատված սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի տարածքներում գործունեություն իրականացնող տնտեսավարողների համար լիզինգի տոկոսադրույքի սուբսիդավորումը կիրականացվի 11 տոկոսային կետով, որպեսզի լիզինգառուի կողմից վճարվող լիզինգի տարեկան տոկոսադրույքը կազմի 0 տոկոս:

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

«ԺՈՂՎՈՒՐԳ». Լիզինգառուն վճարում է լիզինգի առարկայի արժեքի 20 տոկոսի չափով կանխավճար: Ծրագրի շրջանակներում ձեռք բերվող սարքավորումների արժեքների հանրագումարը չպետք է գերազանցի 450.0 մլն դրամը:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ե՞րբ կարող է ուսուցիչը դիմել սահակարգ սահմալու համար:
Աշոտ Ալավերդյան (36 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. ««Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 2022 թ. փետրվարի 9-ի ՀՕ-35-Ն օրենքը ուժի մեջ է մտել 2022 թ. մարտի 3-ից, որով սահմանվել են փոփոխություններ նաեւ ուսուցիչների տարակարգի շնորհման գործընթացում:

Համաձայն վերոգրյալ օրենքի պահանջների՝ մարտի 3-ից սկսած՝ տարակարգի շնորհման գործընթացը կիրականացվի կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից օրենքով սահմանված ենթաօրենսդրական իրավական ակտն ընդունելուց հետո, որով կսահմանվեն տարակարգի շնորհման համար ուսուցչի մասնագիտական չափանիշները:

ՀՀ ԿԳՄՄՆ

«ԺՈՂՎՈՒՐԳ». Անհրաժեշտ է տարակարգի շնորհման համար դիմում ներկայացնել ենթաօրենսդրական իրավական ակտի ընդունումից հետո:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից



Ճապոնիայի կառավարության աջակցությամբ՝ «Արամ Խաչատրյան» համերգասրահը կհամալրվի նոր սարքավորումներով:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:



Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադարձանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ

հայկական տպագիր մամուլից


«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետևյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝ (060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Շիրակ	-4 - 7 +4 + 9	Արարատ	-4 - 7 +11 + 13
Կոտայքի լեռներ	-8 - 12 +5 + 8	Արմավիր	-4 - 8 +10 + 13
Կոտայքի նախալեռներ	-5 - 8 +10 + 13	Վայոց ձորի լեռներ	-3 - 7 +3 + 6
Գեղարքունիք	-8 - 13 +3 + 6	Վայոց ձորի նախալեռներ	-3 - 7 +10 + 12
Լոռի	-6 - 10 +8 + 10	Սյունիքի հովիտներ	-4 - 7 +11 + 14
Տավուշ	-4 - 7 +8 + 11	Սյունիքի նախալեռներ	-9 - 13 +7 + 10
Արագածոտնի լեռներ	-8 - 12 +3 + 6	ԼՂՀ	-9 - 10 +7 + 9
Արագածոտնի նախալեռներ	-5 - 7 +8 + 11	Երեւան	2 - 4 +9 + 11

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22՞/3, հեռ՝ 010 54-64-23
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության 12.3.2024

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆՂ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրայնաչափում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետևյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող էք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»: